




ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

1843-1895 ՀԱՏՈՐ ԵԿ ՅՈՒՆԻՍ

Հ Ի Ն Հ Ա Ի Ա Տ Ք Հ Ա Յ Ո Ց



ՊԼ Ժ. - ՄԱԿՈՒԹԻՒՆ. - ՄԱՋԻՆՁԱՆՑ ԱՂԱՆԴ

(Տես յ'էջ 193)

Եր նախնի հեղինակը և օտար գրիչը յայտնած են մեզի՝ ինչ որ Հայք շատուածոց անուամբ պաշտէին, Քրիստոսէ քանի մի գար առաջ և վերջը. բայց աւելի այլ առաջ իրենց քիչ շատ ընդունած՝ Երկու սկզբանց (Բարոյ և Չարի) և Կրակի աստուածայնութեան պաշտօնը՝ չեն բացատրած. որ՝ հաւանօրէն ծաւալած էր ի Հայս, Թէ և ըլլայ նուազ քան ի Պարս և ի Մարս, և յունական դից և պաշտամանց փոխմամբ՝ մարած կամ մթընցած, ինչպէս նաեւ առ Պարսս՝ Պարթեւաց թագաւորութեան ատեն, և նորէն վառուած ի Սասանեանց յԳ դարու. Սքս ուղեցին արծարծել զայն նոյնպէս և ի Հայս, մինչ մերայինը՝ քիչ մի վերջը ամեն սուա կրօն և պաշտօն թողլով գար-

ձան ի քրիստոնէութիւն. և երբ գար և կէս վերջը՝ Յագկերտ և նմանիքն՝ ամենայն հնարքներով ջանացին ատրուանները բորբոքել ի կողմանս Հայոց, իմացան որ այնուհետեւ հօն ուրիշ աներեւոյթ կրակ մի (Քրիստոսի հաւատոց և սիրոյ) կ'ուընչացընէր իրենց խաւարային խարոյկը:

Բնապաշտութեան վրայօք յիշեցինք կրակի պաշտօնն և Ազաթանգերտի Մոխրապաշտ կոչելը զհին Հայս. սակայն անով իմացանք պարզապէս բնութեան ուրիշ մեծամեծ երեւութից և տարերաց պէս՝ զկրակն այլ պաշտելին. իսկ այս տեղ յիշուած կրակն՝ էր աստուածութեան կամ գերազայն Աստուծոյ էական պատկերն, հանդերձ բազմապատիկ հաւատովք և աւանդութեամբք, որոց բովան-

գրկեալ կրօնքն պէտպէս անուամբք կոչուի ամենէն աւելի և հասարակաց կրօնք ըլլալով ի Պարսկաստան՝ Պարսիկ Դեն, կրօնքը հընարող կամ ծաւալողին անուամբ՝ Չրագըշտական աղանգ, վարդապետութիւնը գլուած լեզուին և զրոց նկատմամբ՝ Աւեսդայեան, և իր պաշտօնէից նկատմամբ՝ Մոգոց տղանց կամ Օրեկք Մոգոսթեան, ինչպէս ի գիրս նախնեաց մերոց կ'ըսուի. զոր պէտք չէ շփութել հասարակօրէն Մոգ և մոգութիւն կոչուածին հետ, որով կ'իմացուի որ և է աղթարական և կախարդական հնարք: Այս կրօնք Պարսից յատկապէս կոչուի Դենիմագդեզն, Մագդեզանց Դեն, զի Մագտա-եսգևա նշանակէ որմզդապաշտ կամ աստուածապաշտ, ինչպէս Տրպա-եսգևա՝ Դիւապաշտ:

Այս լայնածաւալ կրօնքը՝ զոր ի Հայս ջնջեց ըրիտունէութիւնն, հակառակ կերպով մ'այլ խլամական կրօնքը ջնջեց ուրիշ աշխարհաց մէջ, և հիմայ միան սակաւ հետեւողք՝ և սչ կատարեալ ասանդութեամբք իրենց նախնեաց՝ ի սահման Պարսից, ինչպէս և ի մերձաւորն Հայոց ի Բագու, ուր ինքնաղլաւ աղբիւրք են կրակի, և ի Հնդկաստան, և կոչուին Փարսիք, և Կէպր: — Ե զարուն կիսուն՝ Պարսից վերջին փորձն ի Հայս՝ ոչ միայն մեր բարեպաշտից սիրտը բորբոքեց գերագոյն հով սիրոյ, այլ և գիտնոց գրիչը սրեց՝ հերքելու և խայտառակելու մոգոց բարբալանքը: Ամենէն ընտիր հեղինակք մեր՝ Եզնիկ, Եղիշէ, Մովսէս, Ղազար, սակաւ մի և այլք ոմանք, ինչուան մեր այսօրուան վարժարանաց աշակերտաց ծանուցանեն զայս մասամբ, հետաքննելի թողուն միւս մասերն այլ, զոր ըստ կարի բովանդակել կամ համալուծել արժան համարիմք հետեւեալ ծանօթութեամբ, պակասն և սխալը այլոց թողով լրացնել, կամ ընդարձակ ճառողաց զբերել ինդրել. որ եթէ մեզ՝ մեր հին հարց հաւատոցն համար հետաքրքրական է, օտարաց այլ եղած է կրօնքին ընդարձակօրէն վարդապետութեանցն համար՝ ի Չանտ — աւեսդա, կամ Աւեստա և Չանդ կոչեցեալ գիրս, և նոյն իսկ Մոգ անուանն համար:

Անծանօթ է ծագումն այս անուան, որ

այսպէս կարճ և միալանկ՝ խոր հնութիւն մի յայտնէ ի լեզուին Հայոց և Պարսից, որք գրեն (Մոկ կամ Միակ նաեւ Մալ և Միոզ, ըս), անոնց գլխաւորն այլ Մոգպէտը՝ Միւպէտ կամ Մոպպէտ՝ ըստ նախնի գրչաց մերոց. (Արարք Մաձիւս կ'ըսեն մոգի): — Ըստ գիտնոց ոմանց՝ քաղղէարէն լեզուէ ծագուած է Մոպ, և նշանակէ մասժող, նկատող. ըստ ֆիլոսոփաստի (ի վարս Ալպոլունիսի Տիանեան) հին Պարսիկք Մոգ անուանին իրենց յաստուածները, յետոյ անոնց պաշտօնէից անցաւ անունն. ըստ լեւոնդութեան Մ և Բ կամ Պ 'տառից' նոյնանայ ընդ Պոկ և Բագ աստուածային անուանց սկիւթացի և սլաւիկ լեզուաց. ոմանք այլ ստուգարանեն ի Մակա կամ Մահա ըստէ, որ նշանակէ մեծ, ինչպէս և լատինն majus: Թատուկ անձ մի Մոգ անուամբ՝ կարծեմ չի յիշուիր. իսկ տեղի և ազգ՝ նախ մեր երկրին մէջ զանեմք աշխարհ կամ նահանգ մի, երեք առանձին համանուն զաւտաներով, Մոկաց աշխարհ և Առանձնակ Մոկք, կորուաց և Քաղղէացուց սահմանակից, մինչեւ հիմայ այլ վիճակ մի է Մոկ կամ Մէքս անուամբ, որով կոչի և գլխաւոր անունն. ի Մարաց երկրի այլ Մոգ կամ Մոգ զաւտ մի յիշէ Երողոս, բայց գիտնականք՝ ոչ տեղի՝ այլ մոզոց և քահանայից զաս համարին զայն: Ըստ գրից տեղւոյն՝ ոմանք (և աւելի մեր ինձինեան Հ. Ղուկաս հնախօսն) բուն մոգութեան սկզբնաստեղի համարի զՄոկաց աշխարհը, և նոյն իսկ Քրիստոսի ծննդեան ատեն՝ յարեւելից եկած Մոգերն այլ՝ այս կողմէն, որոյ հաւասար չկայ, բաց ի յարմարութենէ անուան տեղւոյն. (որոյ հնագոյն յիշող են յոյն պատմիչքն Հեկադէս և Երոզոտոս (Գ, ՂԳ. Է, ԿԸ) Մոկ կոչելով. — Ս. Բարդղիմէ առաքելոյ վկայարանութեան մէջ յիշուի Մոգոց երկիր մ'այլ ի Պարսս, բայց երկրայելի է. իսկ աղթարաց մէջ յիշուած Մոգոց ազգն՝ կոչուի և իտայեցի կամ իտարայոս երկիր, որ առ պատմիչ է իտարայի, Չինաց սահմանակից թուրք կամ թաթար ցեղ մի:

Գրիգոր Աստուածաբանի գրոց մեկնիչն (Նսննոս) կ'ըսէ. « Մոգքն՝ ազգաւ ի Գամ:

» բայց են, ուստի և լեզրահմանութիւնն
 » լինի » . Գամիլը (ի Գոմեբոյ յարեթեան)
 են նահնի բնակիչք Կապադովկիոյ և Ա
 Հայոց . առնոց մոզութիւնն այլ կու համարի
 « Մակակոյութիւն բարեգործ դիւաց, առ ի
 » բարւոյ խիք հաստատութիւն » . ընդ հա-
 կատակն Պարսից մոզութիւնը՝ մակակոյու-
 թիւն շար դիւաց, որ է կախարդութիւն :
 Այս երկիրս (Գամբաց) մէջ կար Մոկիսոն
 անուամբ քաղաք մի, որ թուի հիմկու Գըը-
 շէհին, զոր Յուստինիանոս կայսր՝ մայրա-
 քաղաք կարգեց Կապադովկիոյ, որ հաւան-
 օրէն Պեք երկիրն նման Մոկս կոչուէր, և
 ի Յունաց բուռեցաւ Մոգիսոս : Ասոնք շատ
 հին և ծուծ յիշատակք են, մեք պարսկա-
 դեն մոզութեան ծանօթագոյն հեղինակը յի-
 շենք, որ հասարակօրէն համարուած է Չրա-
 դաշտ :

Այս հոչակաւոր անձն՝ Քրիստոսէ վեց
 դար առաջ ծանուցուած է, բայց հիմաչ հնա-
 քնինք շատ աւելի հին Չրագաշտ մի ընդու-
 նին, 25 կամ 26 մինչեւ 30 դար առաջ
 քան վթուական փրկչին . իսկ հին պատմիչք
 ըստ Պլինիոսի (Ա. Ա) կրկին աւելի, 6000
 տարի, որ մեր սովորական ժամանակագրու-
 թեամբ՝ կ'անցնի քան զԱլլամայ թուականն
 այլ . բայց սմանք համարին թէ ոտ դաշու-
 կուի Նոյ կամ Սեմ նահպետն : Մեր
 պատմիչք այլ Շամիրամայ և Արայի ժամա-
 նակակից Չրագաշտ մի գրեն, իբր 2000
 տարուով յոռաջ քան զթուական փրկչին, և
 (ըստ Մուխրասայ 500 տարի յառաջ քան
 զարութական պատերազմն) և թագաւոր Բակ-
 արիացոց, որ հակառակ Ասորեստանեայց և
 Բաբելոնացոց հնարեց աղանդ մի : Չրուանը
 կոչելով հայր աստուածոց : Բայց այսպիսի
 զրոյթք շատ անօտոյզ բաներ են, որքան այլ
 հաւանական ըլլայ, թէ հին աղանդապետ մի
 եղած է մոզութեան՝ վարդապետ, կամ այլ
 և այլք՝ որոց անուանք և բանք միացեալ են
 ի Չրագաշտն այն, և յետ շատ զարուց,
 նման աղանդ մի հրատարակեր է զորով և
 բանիւ նոր և մեծ Չրագաշտն :

Արդ սա ըստ հաւանագոյն հաշուոյ ծնած
 600 տարի առաջ քան զփրկական թուա-
 կանն և մեռած յամի 522, յՌոմիս քաղա-

քի . այս տեղս ի յիշելն՝ մեր պատմիչք՝
 գրեթէ միշտ կցեն՝ քաղաք Հայոց, որով ա-
 զանգապեան այլ կրնայ ըլլալ Հայ, նոյնպէս
 Պարսիկ, Մար կամ Ասորի, ինչպէս կ'ը-
 սուի ըստ այլեայլ զրոյթաց . բայց Պարսք ոչ
 միայն իրենց համազգի գրեն, այլ և իրենց
 արքունի Աբեմենեան ցեղէն, ի զատկաց
 Հրուսնի կամ Ֆէրիսունի՝ զիւցազին, և
 որդի Բոքրուշասոյ կամ Բիւրշասոյ որդոյ
 Արասոյ . զմայրն այլ անուանեն Գոռգոս
 Dughda : Անունն՝ Աւեղայի լեզուաւ, ոչ
 բով գրեց նա իր վարդապետութիւնը, կ'ը-
 սուէր Զարագուշքաւ, Զերաթոշ, Զարա-
 դուշտ, յորմէ նոր Պարսիկք՝ Զերտիշոշ (Զ
 անձ), ըստ մեզ Չրագաշտ, և ըստ ա-
 բեմենեայց Չորաստր, Zoroastre . որ ըստ
 բուռնի ստուգարանի Ոսկի-ատոյզ, ըստ ու-
 մանց յասկիպէս Շնիկ ստաղն : Իր դենին
 զրոյ մէջ շատ անգամ մականուանի Սպի-
 տանաւ, այսինքն՝ ըստիւր, գերազանց :

Չրակեշտ՝ 30 տարեկան հասակին ելաւ,
 կ'ըսեն, հայրենիքէն և վնաց դէպ յարեւ-
 ելա՝ Պարսից և Հնդկաց սահմանաց մօտ,
 ուր տանն տարի քարայրի մի մէջ տունն :
 նացաւ, և հօն աղիեցութեամբ Ուրլոզի գը-
 բեց հին բակտրիական լեզուաւ իր հոչակա-
 ւոր զիբըր, Անտաս, զոր նոյնանայն հայ
 բառով՝ թարգմանեն հառաստի քան : ասոր
 վերայ յետ ժամանակաց աւելցան մեկնու-
 թիւնք և ծանօթութիւնք՝ Չանդ անուանեալք :
 վասն որոյ կոչեցաւ Աւեստա և Չանդ . Չանդ
 անունը կը արուի եւս պահլաւիկ թարգմանու-
 թեան՝ իբրև մեկնութիւն քնազրին, յորմէ
 Չանդ-Աւեստա, որ ուղիղ է՝ եթէ ասով
 միայն պահլաւիկ թարգմանութիւնն իմացուի :

Արդ, Աւեստան ըստ հին արեմտեայ հե-
 ղինակաց 2, 000, 600 տող էր, ըլլայ գոնէ
 200, 000, բաժնուած ի 21 Նասք (Գիրք) :
 Աւեստայի այն մասն որ հնագոյն կ'երևի
 քան զայլս, կոչի Գաշա, որ թարգմանի
 երբ, Աղօթք : Մեծ մասն զրոցն կրօնական
 և խրատական է, բարոյական և աղօթական
 ունէր և : աստեղաց, բժշկութեան, հմայից,
 և այլն, վրոյթք ճաներ, նա և իր վարքն,
 և այս գիբըր յՈւրլոզէ ընդունելուս պատ-
 մութիւնը : Բայց այս ամեն զրուածքն այլ

կորուած են, կամ Աղեքսանդրի Մակեդոնացոյ ատելութեամբ՝ ի կրակ ձգուելով ոչ չընացած. և մնացեր է միայն Արտաշէր Սասանեանի ատեն թանկար մոզպետի ձեռքով, և յատուկ լեզուով գրուածն, որ յոթ նման է հին պարսկերէնի, վննտխտա կամ վննտխտա, ի հնուց՝ վիտակիօ—տակիմ, որ է բսէլ՝ Տուեալ ընդդէմ դիւաց, պահաւերէն այլ ճապիտ—չեռա—տատ: Եսանու կամ Իգաչնէ կոչումն որոցն նշանակէ Պաշտամանց գիրք. իսկ Եաչըք՝ են շարականք կամ օրհներգութիւնք այլ և՛ այլ դից:

Նաքըի մասն մի այլ կայր վիտերեռտ. վննտխտա Եսանա և վիտերեռտ միանգամայն կ'ըսուին վննտխտա—Սատե: Ի հնուց թարգմանուած են ասոնք ի լեզու Պահլաւաց, հանդերձ մեկնութեամբ: Կորուսեալ նաքըի մը պարունակութիւնքն ալ ամփոփուած կ'երևին Պռննտահիչ անուն մատենին մէջ, որ ստեղծադրութեան վրայ կը խօսի: Փարսի լեզուաւ այլ մեկնաբանութիւնք կան՝ որ Բագնետ կոչուին, որոց մէկն կ'ըսուի Մինոխրեռտ. նոր պարսիկ լեզուաւ այլ թարգմանութիւնք եղած են, ինչպէս Չերտաչըքնաւ անդալափեալ (ոտանաւոր) Չրադշտի վարքն և օրէնքն, շարգորուած յամի 1277. նշանաւոր է և անակրիտ թարգմանութիւնն՝ Ներիողնակ անուամբ մէկի ձեռօք. կան և Հնդկաց Կիւնարաղ նահանգի լեզուաւ ուրիշ գրուածք այս կրօնից վրայօք, որ երպտէացի գիտնոց շատ յարգի են: Մէկ նշանաւոր դիրք մ'այլ է Խոչրտաե—աշագա կոչուածն, իրբեւ Մաշտոց կամ աղօթագիրք աշխարհիկներու համար, և փոքր կոչուի համեմատութեամբ բուն Աւեալայի. համարուի Արտաշրի որդի Եսպոյց ատեն յօրինուած:

Գիրքը կարգաւորելէն ետեւ՝ Չրադշտ կու տանի ի Պահլ մայրաքաղաք Բակարիոյ առ վշտասպ թագաւոր՝ հայր Դարեհի, և բացատրելով ընդունել կու տայ՝ նախ արհեստեաց՝ յետոյ կ'ապտակաց, և կանգնել շատ մի Ատրաշան կամ Հրատ, ինչպէս կ'անուանեն մեր հեղինակք, որք են սեզանք կամ բազինք քարեղէնք, քիչ մի վրան փռս, որոյ մէջ վառէին և միշտ վառ պահէին զկրակ. ի Պարսից կոչուած Ագերիեան կամ

Արաշիեան, օձձձ, կամ Արեշիեան, օձձձձ կրակարան. բացօթեայ տեղերում, երբեմն չորս կողմերն պատով փակուած, բայց առանց ձեղունի, ինչպէս պատշաճ էր միշտ ծովամուկ արձակող բազնի. Թող որ հին ատեն ամեն ազգաց պաշտօնատեղիք այլ բաց և բարձր տեղերում էին. Կային և շարժական բազինք, նա եւ արծաթեղէնք, զոր կու տանէին պատերազմի և հանդիսց աւտե՛ն՝ զօրաց կամ բազմութեան մարդկան հետ:

Չրադշտի ազանդն շուտ և շատ տարածեցաւ յարեւելս միջուկ ի Հնդկիս և ի Ճեւաստան. բայց այս երկու մեծ աշխարհաց մէջ՝ գրեթէ նոյն և մի ժամանակ մէկ մէկ մեծ ազանդապետք այլ ելած և նոր կրօնք քարոզած էին, Կոնփուկն և Բրահմայն, որոց հետեւողք շատ ընդդիմացան Չրադշտի. աւելի անարգելք մտաւ ազանդն յարեւմուտս՝ զոր նուաճած էին Պարսք, բայց աղանդապետն չկրցաւ տեսնել այս յաշողութիւնը, վասն զի գրեթէ Դարեհի թագաւորութեան տարին մեռաւ կամ սպանուեցաւ վշտասպի հետ, Սկիւթացոց կամ թուրանեանց դէմ պատերազմելու ատեն:

Հաւանօրէն այս ժամանակ՝ յետ մահուան Տիրատան և Կիրտսի՝ երբ Հայք այլ նուաճեցան ի Պարսից, Չրադշտի ազանդն մտած է և ի Հայս, կամ նորգուած. բայց արժանի է յիշելու, որ այս ատեն էր, ըստ Յունաց, և անուանի Հայ մոզ մի, զոր յիշեցինք Արայի և Ալէզից առթիւ. շտոք յիշեն այս մոզը, բայց այլեւայլ անձնաւորութեամբ և ժամանակաւ. ոմանք նոյն համարին Արմենիոս կոչուածն և Պամփիլոցացին, ոմանք ասոնցմէ այլ տարբեր, Կոստիտայ յիշածէն այլ. Աւոքրիտս՝ Հայ Չրադշտն Ռոտանեայ (վշտամայ?) թոռն կ'անուանէ. Պլինիոս այս անուամբ ուրիշներ այլ յիշէ, որ թուի թէ վարդապետական կամ սրբազան նշանակութիւն մի ունէր. Պլինիոս այսպիսի մէկ մի յիշէ Գեղարթէսի ժամանակակից և Չրադշտի զոց անկնիչ. ուրիշ Ռոտանեայ մ'այլ Աղեքսանդրի հետ ուղեկից: Սոյն հեղինակս (Պլինիոս)՝ ուրիշ մոզեր այլ յիշէ՝ Հայաց անուան և ազգի մերձաւոր, ինչպէս Չարատ և Ապուսիոք? ազգաւ Մար, Մարմար և Արաւ.

բանցիփոկ ? (Երուանդ ?) Բարեկացիք, Տարմենք Ասորեստանցի. և քան զանուանի Չրադաշան հին և անոր վարպետ՝ Ազոնակ կամ Ազոնակս անն, զոր բանասերք ոմանք Սեմայ կամ Երբեայ աշկերտ կ'ընեն, մէկն այլ բուն անունն Եդայակ համարի. — կրնար արդեօք մէկն այլ Աքքանագ ըսել, որ է թոռն Յարեթի. — Բայց այս քիչ կամ շատ կարծիական բաները թողլով՝ քննենք քիչ մ'այլ Չրադեշտի կամ մոզոց հաւատքը, առանց քրքրելու նոյն իսկ Պարսից նոր մտքերու անմիաբան կարծիքները ։

Յոժանայ մէջ առաջին իրենց պատմահայրն Երողոս՝ գրած է քիչ մի այս պարսկական կրօնից վրայօք, աւելի երկար գրած էր թէ՛ ու պոմպոս, այլ կորած է. իսկ մեր վերոյիշեալ գասընտիր գրողք (Եզնիկ, Եղիշէ, և այլն) ասելի մօտ ըլլալով Չրադեշտի նորոգեալ ազանդոյն հետեւողաց, Սասանեանց ատեն, բաւական ստուգութեամբ ծանուցանեն զայն. թէ, յառաջ քան զարարութիւն աշխարհի՝ Իբրեւ անձնաւոր իմն կայր Չարտանա—Աքքարանա (Անասնանս ժամանակն), որ է ըստ մերոցս՝ Չրոռան. և փափազէր որդի մի ունենալ, և այսոր համար հազար տարի յաշտ առնէր, այսինքն նուէրք պատարագ կ'ընէր կամ կ'ընծայէր. — (որտ' և ինչ բան). — Ինչպէս ծաղրելով հարցընեն Եզնիկ և ուրիշ մեր և օտար Հարք : Վերջապէս յղանայ Չրուան խեղեփս (երկուորեակս), մէկն իր փափագանաց համար, մէկն այլ իր տարակուսանաց. և սա նախ դուրս կու գայ. (ուսկից). — զարշահոտ, տգիլ տժգոյն մէկ մի, որ Աւեստայի լեզուա կոչուի Աճըրուանայինու յորմէ նոր պարսկերէն կոչուի Ահարսիսն, Հարաման, Ահրիսիսն, Հարիման, Խարաման, և այլն. այսպէս կոչուելուն պատճառ՝ Եզնիկ կ'ըսէ, « զխարամանի » անուն յանձին կրելոյ՝ (վասն) առ ի յարեւ » զարեգակնաստեղիկսն արկանելոյ, ուստի և » զանունն իսկ զխարամանոյ առ, նոյնպէս և » Սասանայ անուն՝ ոչ բնութեան ինչ անուն՝ » այլ բարուց » : Քիչ վերջ ծնանի լուսաւոր և անուշահոտ որդին, Որմիզդ (1), որ կու

ստեղծէ զերկինց և երկիր և որ ինչ անոնց մէջ. ստոր նախանձելով Ահրմէն՝ հակառակ կու ստեղծէ չար էակներ, ինչպէս հրեշտակաց գէմ՝ դեւեր, ընտանի կենդանեաց դէմ՝ զազաններ, լուսոյ դէմ խաւար, սոսողութեան դէմ՝ հիւսնգութիւն, փոխանակ կենաց մահ, և այլն, և այլն : Այսպէս երկարմատ սկիզբն հաւատոց կու ծագի, այսինքն բարույ և չարի հակառակութեան, ի տարբեր անձերէ կամ սկզբանց, որ ուրիշ կրօնից մէջ այլ երեւած է : Բայց Չրադեշտի կրօնից մէջ՝ Որմիզդ համարուի մեծ և պաշտելի աստուած, Ահրմէն՝ պարզ հակառակութիւն մի, զոր յետոյ Չանդիկը և Մանիքեցիք հաւասարազօր հակաւորդ հռչակեցին, անոր համար ատելի եղան զարգեշտականաց. ինչպէս Եզնիկ այլ կ'ըսէ. « Ընդէր ատիցեն մոզք զՉանդիկս » : Չորս զրոց հեղինակն այլ, « Ո՞՞ տաց ըզ » հատուցանն վարնուց մանկանց Խաւարի՝ » Չանդիկ աղանդին՝ որք են Մանիքեցիքն » : Մոզոց կամ Մազդեզանց մեծ ջանքն էր՝ աստի զԱհրմէն, և պնդել թէ իրենք միաստուածեան են, զՈրմիզդ միայն անշնաւով աստուած մեծ :

Իրաւ է որ Աւեստայի մէջ որոշ նշան չկայ բազմաստուածութեան, և ոչ անոր մեկնաց, սակայն՝ գոնէ անոնց յալօրդքն կամ նորերն՝ աստուածակերպ էակներ կամ զօրութիւններ երեցընեն. որոց գլխաւոր կըրնայ ըսուի Հոնամպար կամ Հոնամպար, Հոնովիթ, Ահռանվար, և ըստ Աւեստայի՝ Ահռանվարյիս, որ էր աստուածային (խօսք), թէ ոչ անձնաւոր՝ գոնէ դիմաւոր, որոյ յաստուածային Բանէ՝ որ կոչուէր Մարրուս Այս Հոնամպար արարչազօր խօսքով՝ Որմիզդ հերքած է Ահրմէնը. ոմանք պարզ մակիր մի համարին զայս Որմիզդ 2 : Բայց Սասանեանց

մանի Ոգի ամենմաստ. Դարեհեան արձանազրութեանց մէջ Արտաւազտա, ըստ Հայոց Արուսազդ, ըստ նախնի Հեղինաց՝ Oromazdes, ըստ Սասանեան Պարսից՝ Զօրմիզդ. ըստ հայ գրաց Ե դարու՝ Որմիզդ. նոր պարսկերէն՝ Հիարմիզդ, Հիարմիզդ :

2. Մեր ազգի անձանց յատուկ անունաց մէջ լսուի Հոնամպար ի ԺԱ դարու, և ետքը :

1. Աւեստայի մէջ Ահռարա—մագտա որ Թարգ.

ատեն Միհրի աստուածութիւնն անտարակոյս է, ինչպէս տեսանք և ի Հայս (99-100), ինչպէս և անոնց Անահիտը (53-57) :

Եթէ ոչ աստուած՝ բայց աստուածական կամ զերազոյն ոգիք նշանակուած են մոզուց հնագոյն զրոց մէջ, իբրեւ մերձաւորք և պաշտօնեաց Որմզդի, Աւշարսանգ կոչուածք կամ Էմշարսփեկես, Էմնուսփեկես, Ընօնօրմ Աւեստայի լեզուա՝ Աւէշա-Սրահնա, որ Թարգմանի Ամնահ-Քարերարք, որք թուով վեց էին : Որմիպ պլ մէկտեղ աւելով եօթն կ'ըսուին, և Հրէից ու քրիստոնէից Հրեշտակապետաց պատշաճին և վեցից տասնին է Բահման կամ Պէհմէն, Եւր, հին կերպով Վօհռա-Մահո Թարգմանուի բարի միտք. ամեն բանի խնամակալ, հոգիներու վերբերող. այսոր նուիրեալ էր մայիս ամիսն և ամսոց Բ օրն և Շուշան ծաղիկն : — Բ հրեշտակապետն է Արտասպահիշդ, աստուած, Աշավահիշդա, որ է ըսել Սուրբ կամ վեհագոյն, ըսյս աշխարհի, օրէնք բարի, և այլն. օգնատես ամիսն այսոր նուիրուած էր և պահպանութիւն կրակի, ամսոյ Գ օրն, և Մերզէնզիւլ ծաղիկն (mayorana, Մշտիկ) : — Գ. Շահրիվար, Շէհրիվեր, Եւր, ըստ հնոց խոչարս-վայրիչա, որ է Թագաւոր մեծ, տեսուչ մեծութեանց աշխարհի, բովոյց, լերանց, և այլն. իրեն նուիրուած էր Ժ ամիսն (դեկտ.), ամսոց Դ օրն, և Ռեհան ծաղիկն : — Դ. Սրահնուարմատ կամ Իսփեհնուարմատ (տես Սպանդարամետ, 194) Սրահնա-արմաիդի, որ է Ազնուութիւն սրտի, անուշիչ սրտից, անասնոց խնամակալ, իրեն նուիրեալ էր Ե ամիսն (յուլիս), և ամսոց Զ օրն, Ուտի ծառն. սա միայն հրեշտակուհի համարուած էր, իբր զուսոր Որմզդի : — Ե. Խորտատ կամ Հառօշվարատ, որ է Կենսատու, ժամանակի վարիչ, խնամակալ երկրի բուսոց և շրոց. իրեն նուիրուած էր Զ ամիսն (տեպտ.) ամսոց Զ օրն և Շուշան ծաղիկն : — Զ. Ամիրտատ կամ Ամարտատ, որ է Ամանահատոր, կամ մահուան պիտաբընող, խնամիչ ծաղիկանց և պտղոց՝ իրեն նուիրուած էր ամսոյ Է օրն և Չամբա? ծաղիկն :

Այս գերագոյն ոգիներէն կամ հրեշտա-

կապետներէն վար՝ ի հարկէ պիտի ըլլար դառ մի Հրեշտակաց, Ֆիրիդդէ, ڤيروز, որ սովորաբար Իդես (Ազատ) կոչուին, և ըստ Աւեստայ՝ Եագադա, որ նշանակէ աստուածային իմն, զորն պատուելի. Եադ կոչին և սպարզ զորնց, յորմէ և առ մերս Յաշտ, ի սանսկրիտն Եւձատ և Եւադրաշիւս նշանակէ ինչ որ ի մեզ ըստ պարսկին Յաշտ, զորն և Աւելի քան 40 Ազադք յիշուին, և 24 կամ 28 զխաւորքն, որք խնամող կամ պահպան համարուին ամսոյ օրերուն, ոմանք երկու աւուրց, ինչպէս մէկ քանի աւուրց էին Էմշարսփեկեսը : — Կարգենք այս տեղ ամսոց անունները և անոնց միջոց կատարուած տօները, յետոյ այդ ամսոյ աւուրց պահպանաց անունաբը :

Ա. Ազոռ, ڤيروز, որ է ըստ մեզ Արեգ, Մարտ. Թ օրը կատարուէր տօն կրակի և Ատրուշանաց, և կոչուէր Ազոռպակն :

Բ. Տաջ կամ Խոռեմ, ڤيروز Խիշրիմ, (Ահեկան, Ապրիլ) որ նշանակէ զուարթութիւն. Բ օրն էր ամսական, Խիշրիմ-րոզ . Գ. Բահման, Պէհմէն (Մարտի, Մայիս), Բ օրն Պէհման-րոզ, տօն ուտելեաց, միւսոյ, պտղոց, և այլն :

Դ. Սպանդարմատ (Մարգաց, Յունիս). ԺԷ օրն տօն փասակար բաները Էմշելու, ինչպէս կարծենք, և այլն :

Ե. Ֆիրվերտիյե, ڤيروز, որոյ նմանաւ ձայն հայ ամիսն այլ՝ Հրորտից, ինչպէս գրուի ի հին օրինակս, ի նորա՝ Հրորտից, (Յուլիս). ԺԹ օրն տօն նոր զգեստ կարելու, ոչխարները մաքրելու, և այլն :

Զ. Էրտիպիհէշդ (Նաւասարդ, Օգոստոս), Գ օրն տօն պատուելու զիրակ, զթագաւորաւ, և այլն :

Է. Խորտատ, (Սեպտեմբեր). Հայերէն ամսոյ անունն այլ նման Հոսի, առանց տաս յաւելուածի, որ կրնար նշանակել տարք, իբր Հոռետուր կամ Արեւատուր. Զ օրն էր տօնական, խնդրուածոց յԱստուծոյ, և յաջող ամուսնութեան :

Ը. Տիր (Մահի, Հոկտեմբեր). ԺԳ օրն Տիրակն էր տօն և յիշատակ հաշտութեան Միւսուէրի և Էֆրասիսպայ. ըստ ոմանց և Ապրիլից կեանս ڤيروز, տօն Չրոց :

թ. Մոսորտա (Տրէ, Նոյեմբեր), ԺԷ օրն տօն քաղելու զՆենուֆար ծաղիկ, Չհշ- մի-Նիշուֆեր :

Ժ. Շահրիար կամ Եհերիյվեր յշրգո՞ւ (Քաղոց, Դեկտեմբեր). Դ օրն Եհերիյա- րական, յիշատակ ծննդեան Դարեհի. Ը օրն թեզան՝ اناجند, Աշուն :

ԺԱ. Միհր (Արաց, Յանուար), ԺԷ կամ Ի օրն Միհրեկեան կամ Մհերիկեան, տօն բարեկամութեան, յիշատակ յաղթութեանց ֆերիտունի (Հրոսրեն խորենացոյ) և թա- գաւորութեան Արտաշրի Սասանեանց :

ԺԲ՝ Ալպակ (Մհհեկան, Փեբրուար). Ժ օրն յիշատակ գահընկեցութեան Էֆրատիայայ ձեռամբ Չաւի :

Ֆարվարտեկան կոչուին Աւելեաց հինգ օրերն ի Չերտիշթամակ գիրս. արեմն արիչ կարգաւորութեամբ էր կարգ ամսոց տարւոյն, որ վերջանար ֆերիտունի (Հրոսրոց, Յուլիս) ամսով, և համաձայն Հայոց սոմարին՝ ի Նաւասարդայ սկաննելով զարեմուտն : Միով անուամբ ֆենեի-մագոսիեակնան կոչուէին ա- տաղըն, այսինքն Հինգ որբազանքն : կամ ֆենեի թռանահարան՝ Հինգ բոյրերու. խրաքան- չիւր հին և նոր յատուկ անուամբ կոչուէին, ա. Անուանաւտ = Աֆերիյն. բ. Ադա- աւտ = Ֆիրրուշ (երջանիկ). գ. Էսֆիհիզա- մաւտ = Ֆիրրուշ (յաղթական). դ. վաճառ- խաղորթ = Ռամիշ (վեհ). ե. վեհիշոռշ կամ վիհիշոռշիշո = Տիւրիա (ողջ մնայ, մնայ բարով) : — Մոգերն այս Աւելեաց օրերուն՝ Քաղաց հաց և կերակուր նուիրէին տանիք- ներու վրայ : — Շատ տեսակ օրական խրա- րութեանց, մէկն այլ էր՝ ամսոց ԺԻ օրն՝ Սիրիուար, որ բռն է Սխտորակեր, ընդդէմ գրաց փասակարաց : — Թէ ամսոց և թէ աւուրց ամսոց նոր անուանքն զրուած են Յազկերտի սոմարի նորագութեան ասեն, պահլաւի կամ փարսի լեզուա :

Կարգեմբ ամսոց խրաքանչիւր օրերու պա- հապանաց հին և նոր անուանքն այլ, հան- դերն նշանակութեամբ անոնց պահպանած կամ ինամած բաներու. միանգամայն և խորութեամբ աղոյ (Ա) և ձախոյ (Չ) օրերու :

1. Ա. Ուրաղ. Անուամ	Յարուութեան. Նոր շինու- թեանք :
2. Ա. Բաւման. Վաւա- ման	Անուամ մարդկան, կոց, սպուց :
3. Չ. Ասորիյեհէւտ. Ան- յաղիշ	Կրակ :
4. Ա. Շարիվար. Շաղ- նապին	Լերիկ. Բովս :
5. Չ. Սրանդարմաք. Սա- բանամա	Կենդանիք :
6. Ա. Խորատա. Խուն- աւա	Չուրք և Բուրք :
7. Չ. Ամարտա. Ա- մանաւա	Մտաք և Մարգք :
8. Չ. Տերատար (Տեհի- րաւան Արան)	Վաճառք, շինութեանք. կեն- իրակուր :
9. Չ. Ատար. Աշուն	Կրակի պաշտօն :
10. Ա. Ապտ. Աւան	Չուր, Մշակութեան :
11. Ա. Խորշիւր և Խոր- կամ Խունաւա	Արեւիկայ :
12. Ա. Ման կամ Ման	Պանդ, Չրուանք :
13. Չ. Տեր	Ամաք, անիւրք :
14. Ա. Գոշ	Անուամ :
15. Ա. Տերմիւր Տեհի- րաւանալուն	Լեւուք (78). բարի դարք :
16. Ա. Մեր. Մաղան	Արեւիկայ. Բուսաբերու- թեան :
17. Չ. Սերու, Սարու	Անուամ. Պահպան ող- անք արաղոց :
18. Ա. Ռաշե. Ռաշան Ռաշե. Բաւա	Խրաւուք և արդարութեան :
19. Ա. Տերվարին	Արդարութեան. Հոգիք մարդկան Դեհի տաճիք :
20. Ա. վաւամ. Պերամ վաւամբամ	Ուղուրք :
21. Ա. Բամ	Բաղք :
22. Ա. կուվա. վաւ	Հոտք :
23. Չ. Տերմիւր Տեհի- րաւանալուն	Անուամ թնք ?
24. Ա. Տեհ	Մաղդկանք կրակ :
25. Չ. Աւանակ. Ար- մարտանք	Մորարգիք. կրանուրք :
26. Ա. Ազաւա	Սերմանք երկրի :
27. Ա. Աման	Երկիկ :
28. Չ. Չափաւ	Պաղարք ծաղոց :
29. Ա. Մաւ Երաւ Գան	Արդարութեան :
30. Ա. Ահիրան	Հարանիք :

Այս օրպա՛հ Աշտաներէն զատ յիշուին ի գիրս անպուց ուրիշներ այլ, ոմանք նշա- նակա պահպանութեան կամ յատկութեան ինչ և ոմանք ոչ, կամ մեզ անծանօթ. որոց մէջ երեւելիներէն մէկն է Վանանք կամ Վեանիք, որ յիշեցնէ մեր Գոյթման դա- ւառին մասը. այսպէս կոչուէր և ասող մի՛ պահպան Հարաւոյ. զարեւալ գոճոխոց շա- հապետ և զատուար էր վանանք : — Հոս՛ կամ Հատալ, խնամոյ անելութեան և ծո- վու : Պարդի (Պերմ ?), որ Հոմայ ընկերոց կամ համարք համարուի : Նիրիշէնիկ, Նա-

բոռչակն. — Ռադդեսք, Ռադաստայ. —
 Դանման, Տանման, հոգեհան հրեշտակ. —
 Հարդորենկ, Սայլի եօթն աստեղաց պա-
 հապան: — Աշարերաս? — Ղուպարի,
 Ղարպարի: — Խեշասպատ: — Հարոտ
 և Մարոտ (Հարատդ, Մարատդ), ասոնք
 ասպտամբած են յՌմբզդէ և պատմուած
 պիտիվայր կախուած ի Բարելոն: — Ֆի-
 րիևոնետա, Ֆորասոհոնետա: — Պարտան,
 շարժող հողմոց: Պէշէր կամ Դաշտեր,
 սննպատու մարդկան: — Ռեշանպախշ, հա-
 զետու, հակառակ հոգեհան Դանմանի: —
 Ղերոտղանան, Ղարատղանան, քննիչ գոր-
 ժոց մարդկան: — Սէրոշ, պիտուր Ազա-
 տաց մէկն է, ինամակալ մարդկան և երկ-
 րի: — Պէհրամ, կրակի տեսուչ: — Ար-
 տաշխառքա, Անահիդա՝ երկնային Ղուրց և
 աղբերաց պահապան. սա էզ համարուի,
 նոյնպէս և Մանրեարանտ, հաննարոյ ազոյզ:
 — Ռոշնի, Ռեշնեկուսդ, բիւր մի բնկերնե-
 րով, ուզիլ վարոց. հակող: — Հնուշտ,
 Օշոռշտ, Ֆոհոշխէշքրէ. այս երեքն այլ
 ուրիշք են, այսինքն իզական Ազատք. —
 Ասոնցմէ ամանք Հրեշտակապետաց օգնական
 համարուին, և անոնք հանքար կոչուին: —
 Ամեն երեւելի նարածոց այլ յատուկ խը-
 նամոց կամ հիւրող ոգիք կային, ըստ մե-
 զոց. ինչպէս, Արեգական՝ Խաշշտ, Ղու-
 նի՝ Մասեհա, երկրի՝ Սյպանշարանտ, Ղրոյ՝
 Աւա, Օղոց՝ Կոպատ, Անձրեւոյ՝ Դեշտար
 Տիր, և այլն, և այլն:

Յիշեցինք որ քան զամենայն աստուածա-
 զան ոգիս գերազոյն էր Միհր, և իրեն
 նուիրուած ամիսն և օրն և լիցօրեայ տօնք
 Միհրական, յորում ներուած էր Պարոից
 Թագաւորին՝ (կ'ըսեն Յոյնք) մինչեւ ի գի-
 նովութիւն խոնջ և հրապարակաւ պարել,
 իբրեւ ի բարեկենդանի, և զի այսպիսի օրեր
 ախորժելի են բազմութեան մարդկան, բնական
 է՝ որ անոնց առիթն Միհր այլ շատ սիրելի
 ըլլար, նա և քան զՌմիզդ ինքն. և ոչ
 միայն ի Պարս և ի սահմանակից աշխարհ, այլ
 և յարեւմուտ, ուր ինչուան հիւսիսային
 կողմեր գտուին Միհրական պատկերք, Mi-
 thriaques կոչուած, որ կերպարանեն փոխ-
 զտպակ երիտասարդ մի, պարթեւական կամ

հայկական հագուստով, ծունկը ցլու մի վրայ
 զբած՝ զոր կու փողոտէ, երկու կողմը նոյն
 հագուստով երկու անձինք այլ՝ մէկ մէկ ջահ
 բռնած, մէկին ծայրն զէպ ի վեր միսն ի
 վայր, ցորեկ ա զիշեր նշանակելով. ցլուն
 քովը և ներքեւ կան շուն, օձ, կրկայ, կա-
 րիճ, տարւոյ եղանակաց նշանակք, երբեմն
 և երկնից կենսանակամարին նշանք, արեւ
 և մահիկ լուսնի: — Յունաց այլ՝ ծանօթ
 և բնպունուած էր Միհրական տօնն և պաշ-
 տօնն, զոր տեսանք (99) Թէ ինչպէս ա-
 ւանդէր Նոննու մեկնիչ Գր. Աստուածաբանի
 ճառիցն: Ուրիշ մեկնիչ մ'այլ գրէ. « Հե-
 » թանոց՝ պայծառի որ զՄիթրոսի տանջանն
 » կրէր՝ գրէին զնա որդի մեծին Արամազայ,
 » ոչ բնութեան՝ այլ կոյմամբ ու. — Յետ
 Միհրայ մեծապատիւ Ազատ էր մոզոց՝
 Տիր, որոյ պաշտօնն այլ ի Հայս՝ յիշած
 եմք (100), նոյնպէս քիչ մի վերն այլ
 այնոր նուիրուած ամիսն, օրերն և տօնն:

Բարերբաբ ոգիներու կամ Ազատաց ներ-
 հակ՝ շար ոգիք կամ զեւք այլ կային, ըստ
 մոզոց, ինչպէս, Ռմբզդի՝ Աճրմէն. սա կո-
 չուի եւս Տարոսպի և Կանաւիկոն՝ նշանա-
 կելով շարանձիկ. լից Ամասիկէնոտք այլ
 հակառակքն են, Աքռմի՝ Կուտարք, Աե-
 տեւ կամ Անտար՝ մեզառաիթ, Կանել կամ
 Սյաւան՝ բունաբարոց. Դարմատ, Խեւ-
 Թարիզ կամ Թարիք՝ Նախանձտ. Չարալ
 կամ Չարիլ՝ Յափշտակոզ: Ամեն մէկ Ա-
 զաաի այլ իր հակառակողն կայր, յորոց յի-
 շեմք քանի մի. — Աշնոզ կամ Աշնետոյոյ,
 ստութեան և հերքաւածոց զեւ. — Ղեմէհաշա-
 Ղանաւիկոն, համարք Աճրմէնի. — Ասֆուն-
 ձակեր, բքարեր, ամպրոպայոյզ. — Ասքր-
 նէշ և Աքրանէշ, ծանգահար. — Տաշայիտ՝
 մուրեցուցիչ տղայոց. — Բեդիշարան, վըշ-
 տացուցիչ. — Ահարիւան, ապականիչ բերոց
 երկրի. — Հիշիմտիվ, մահաբեր, հակառա-
 կոր Սերոշի. — Միհր-տիրոնէ, տխտա-
 դրուած և լից մեծ մեղք. — Լաֆիա, շփո-
 Թիլ աղօթազաց. — Նիսազ (հայերէն այլ),
 ապահովութիւն, — Ռուսակ, նախանձ. —
 Խազամ, հայերէն այլ խազմ, կախ. —
 Վարան, արհամարութիւն, հպարտութիւն. —
 Պարմոն, գանդաւ. — Պաս, յամառու.

Թիւն ի շարիս. — Դիր, Թուլութիւն, հիւանդութիւն. — Նագոռ ճանճիկ դեւն, որ ի հիւսիսոյ կողմէն գայ. — Վիգար կամ Վիգարեոյ, հողէկաց դեւ, և այլն: — Գլխաւոր դեպքն ըստ մեր բառի կոչուին Տակկա, Տիվ, այլք՝ Տէրոռն, ըստ մեզ Գրոսեան. և Տոխա, որ Թերեւս լլլան մերոց Թուկքն (Գր. 486): Եղնիկ յիշէ և Մոսկի կամ Մահնէ դեւ մի, որ լուսոյ ստեղծման գալաւ նիբը գիտէր, և « որում՝ ցայժմ պաշտօնեայր » այնք քէշի՝ երկցս յամի զոս մատուցանեն »:

Զարմանալի և գովաւորմանալի տեսակ մի հոգեղէն էակաց կամ պատկերաց՝ մոզուց աղանդին՝ են Պրատաչիս, ըստ յետնոց՝ Պրատաչիս, Գերուէիք, որք համարուին էակաց և հոգւոց նախասկիզբն զազափարք, կամ մտաւոր պատկերք ի գիտութեան Աստուծոյ, կամ հայելիք իմն հոգւոց. նման իմն Պղատանի կարծեալ նախաստեղծ հոգւոց, որք ի ժամանակի միտարին ընդ մտածինս. Արեւմենեան թագաւորաց քանդակաց վերայ (ի Պերսեպոլիս) կերպարանին Գերուէիք՝ իբր մինչ ի կէս մէջք պատկերք թագաւորի՝ երկու թևերով շրջանակի մի մէջ (1):

Որչափ որ մոզուց սկզբնական կրօնքն և պաշտածն միաստուածութիւն էր, և պաշտօն Բարւոյ, այսոր հակառակին իմաստն՝ Չարն՝ այնքան զատեց հետացուց այդ երկու դազափարներն, որ ամենայն չար՝ դիւական իմն համարուեցաւ, ամենայն բարի այլ՝ աստուածային, ըստ այժմ և տարբեր սորազան և պատուելի եղան, մանաւանդ գլխաւորքն, Հոռ, Զուր, Հոռ և Հոռմք. Երկիր՝ այնքան սքազան համարուէր՝ որ անվայել էր մեռեալները անոր մէջ թաղել, անոր համար կու ձգէին զանոնք ծառոց վրայ կամ բաց կամ շրխապտած տեղ մի, ինչուան որ զանոնք և թաղուք ուտէին մարմինները. ապա սկիզբները կու ժողովէին ի Գախաւայս, զերեզմանաւտեղիս, առանց թաղելու. և թէ

սխալմամբ թաղուած ըլլար՝ այն տեղն 50 տարի անգործ անձնակ կու թողուր: — Զրոյ սքրութեանն համար այլ չէին համարձակեր այնով լուացուիլ, այլ գումիզով, (կրտ մէջ). այս էր Յազիբաթի կամ Միհրնեբոսէի հրամանաւ պատուէրն առ Հայո. « Զնոք՝ առանց » կրտմիզոյ՝ մի՛ լուացին » Այս բանին համար կ'ըսեն, Տիրիթ պարթեւ՝ առ Ներոն կայսր երթալու համար, ցամաքային երկար ճամբան բռնեց, որ ծալու ջուրը չի պղծէ նաւագնացութեան ակթիւ: — Իսկ Հրոյ սքրութիւնն և պաշտօնն շատ հեղ յիշուեցաւ և շատ յայսմի է, մինչև հիմայ. բունդակաց մէջ այլ կ'երեւան ինչ որ պատմիչք և տեսողք այլ ոկարագրեն. ատուշանի կամ կրակալատ բազնաց բով կեցած երկու պաշտօնեայրք, մոգ կամ Մոռպէս, ծնօտնին քեւրակակաց լաչակով մի կամ կապերտակով պատահ (որ շունչերնին կամ թուք և լորձուք չի զալի կրակին), զոր կոչեն Փսևաւ կամ Փսևիզաւ, Պսևաւ, Պսևաւ, Փսևաւ (2). կամ թէ չէ՝ դուլնին դրած խոյրին փէշերով ծածկին բերանին՝ որ անդապար աղօթքներ մըմընէ. ձեռուբնին այլ նուան կամ զազի մտոր ճիւղերէ (22 կամ 35 թուով) սրցակներ բռնեն, զոր կոչեն Պերսաւ, ի գիրս մեր Բարսաւնք. որ նոյն է ըստ ոմանց՝ փարսաման բուսոյ հետ (Ty-mus serpyllam), որոյ ճիւղերն այլ հասարակօրէն բռնելիք կ'ըլլային կրակապաշտիցն: Մոգերու գլխաւորն կամ անոնց մէկն այլ ի ձեռքն ունէր « Ուոն, որով հրամայէր » ինչպէս գրուի և Ս. Յիզաբիթուպի մկայաբանութեան մէջ, և էր զաւազան մի փայտեղէն, նշանակ իշխանութեան, իսակ կամ Էստան կոչուած (3): Սոյն մկայաբանութեան մէջ մոզուց կրակին քով կենալու կերպն՝

1. Այսպէս գրէ Թարգմանիչ մեր Ոսկերեւանի Մեկն. Եսայեայ (Գլ. 108). « Այժմէն » իսկ ի տօնն կապերտակն իմն զերեւազն պատեն և Փազանս ի բերան, առ մուլութեանն »:

2. Եղիշէի պատմութեան մէջ կարգաւք որ Պարսից սպարապետն Քիր զորքերը յորդորելով ի քաղութիւն, կու յիշեցնէր թագաւորէն ընդ ունեւո պատկերն և Ուոն:

1. Միթէ Վանայ կողմերում գտուած պղձնեայ թռչնաձեւ փոքր ձուլածոյք այլ՝ անսակ մի Գերուէիք չէն, զորս կարելի ըլլայ կոչել Հրատեթ:

կ'ըստի յասակի կույ, որ թերեւս բերանակապ կենալն նշանակէ : Այս բերանակապը հրամայէր Հայոց Յապկերտ նա եւ խմոր թխելու ատեն . « Հայք՝ առանց փանամի մի՛ զանգջին » : — Գարձեալ , ի պատիւ կրակի կու հրամայուի , « Նրկտք ե Քաղորք ի կրակ » մի՛ եկեցեցն » : Այրած մաշած կրակին մնացորդն անգամ՝ Մոխիրն , սրբազնացեալ էր , պէտք էր ժողովել ե լեցընել ի Մոխրակոցս , որ եօթն մեծամեծ Ատրուշանաց կամ կրա-

կատանց մէջ⁽¹⁾ էին . ե ճշգուծեամբ կու պահանջէին ի պաշտօնէից՝ մոխիրին քանակը . այս է եղիշեայ մէջ յիշուած մոխրաւալի կարգն : Նոյն հրամանաց մէջ յիշուի ե կապձարիւ կարգ , որ էր որոշեալ շափով մի ժողովել մանր ճճիներ , մրջիւններ , դորտեր , ե այլն , իբր պիղծ (Խարֆասադար) կենդանիք՝ Ահրմէնէ ստեղծեալ , ե ջնջել զանոնք , կամ առ մեղպեան զրկել , որ ապահով ըլլայ՝ թէ կրակի մէջ չեն ձգուած :

Շարայարեիտ



ԱՐՈՒՍԱՅԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



(Տես յէջ 197)

Գ. Դահնշաչի մահուանէն տասն տարի մի վերջը՝ ուրիշ Հայ վզուրկ միանգամայն ե քաղ զօրավար մի փառք փայլի յՆգիպոսոս , Արուսաչի Զուհրեայ վանաց ստորագրութեան մէջ յիշուածն թա՛ն առ-տանելա Պեհրամ , ج

թիցք ձյծձ . ծանօթ ազնուական ցեղէ Պահլաունեաց , ի մօրէ այլ Գրիգ . Մագիստրոսի Թոնն , հօրեղբայր Ս . Ներսիս Ծնորհաւոյ ե եղբայր Գրիգորիսի եպիսկոպոսին Նգիպոսի վահրամ . ասոնց հետ եկած էր նաեւ միւս վերայրնին , Վասակ , զոր ե վաւիլ ե Երասպ

الجالس کونین Արարացի պատմիչք : Ենոր հալի իր Վիպասանութեան վերջ իր ցեղին ազգաբանութիւնն ընելով , յիշէ զայս երեք հօրեղբայրն այլ , նախ մեծ Վկայստիրին համար ըսելով , թէ յՆգիպոսոս՝

« Անք ի յաթոռն ստբբ եղեալ Չառ ի քեռէն որդի ծնեալ ԶԳրիգորիոս համանունեալ... Որ Յովսեփայ մեծին նմանեալ՝ Ըզհամազգիս լղկնի ձրգեալ , Զարի եղբարս իւր քաջացեալ , Ըստ Յետվայ զօրավարեալ . Որոյ վահրամ վերանայեալ , Միւսայն Վասակ անուանադրեալ : Որք վիշազոյն փառս ընկաեալ եւ մեծարգի պատուոյ հասեալ . Ըզպատերազմ ազանց վանեալ Հակառակաց յաղթող զըսեալ . Վասն այսորիկ շրգեղացեալ , եւ աշխարհի նոցունց տիրեալ » :

1. Այս եօթն կրակատունք կոչուէին Ազեր-Մհեր , Ազեր-Նուշ , Ազերվոյն , Ազեր-Խէրլոյն կամ Ազեր-Թուրաւա (ի Երբազ) , Ազեր-պէրզիւն , որ նշանակէ Հուր ի վերայ Թամբի , ի յիւտակ Քէլիսարեփի ձիէն ընկնալուն ե այն տեղ առ-րուշանն շինուելուն , ե Ազեր-Զերտէհիւշ : Յայտնի է , որ բոլոր այն մեծ նահանգն որ Հայոց ե Մարաց միջասակման է , կ'ըսուէր ե կ'ըսուի Ազերպէղեան , Ատրպատական , որոյ Գապրէժ մայրաքաղաքն այլ Ազիւրպատ : Մեր գրոց մէջ յիշուին ե վշտանական կրակ (Աթէշ Պէհլուս) որ կարկեհան քարի գունով կարմիր նա-նակ է , ե 1001 տեսակ կրակ կայր հօն՝ կ'ըսեն : Որովպէսմէն հոսր այլ յիշուած է , իբր աստուածային կրակ :

Տիրելն շատ է , բայց ստուգիւ տեսակ մի տե-րապետել ե պայազատել էր կէս դար , Պատրի ե Դահնշաչի վզըրկութիւնն . վասն զի Թոյլ տուութեամբ կամ Թուլութեամբ Խալիֆայից , իրենք հոգային թէ քաղաքական թէ դիմու-րական գործերը , ե թէ տնտեսականը , այս-ինքն տէրութեան զանն կամ եկամուտ . որ Պատրի վերահոգութեամբ , ե Աշխարհալ